

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ 62-ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց առաջնորդական վիճակի 62-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը գումարվում է 1964 թվականի մայիսի 1-ին և 2-ին, ուրբաթ և շաբաթ օրերին, Սաութ Միլուոկիի հայոց Ս. Հարություն եկեղեցում, նախագահությամբ առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի, ժողովի հրավիրված 144 եկեղեցական և աշխարհական պատգամավորներից 90 հոգու ներկայության։

Թեմական պատգամավորական ժողովը բացվում է ուրբաթ երեկոյան, առաջնորդ սրբազան հոր աղոթքով, որից հետո կատարվում են պատգամավորների ստուգում, դիվանի և հանձնաժողովների ընտրություններ։

Հատենի ժողովը, հոտնկայս, ընթերցվում է Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ապրիլ 8 թվակիր ողջույնի և օրհնության հետևյալ գիրը.

«Ողջո՛ւյն և օրհնությո՛ւն թեմական պատգամավորական ժողովիդ։

Ս. Էջմիածնի կամարներուն ներքև շողացող Ս. Լուսավորչի կանթեղի լույսը թող շողա ձեր հոգիներեն ներս և պայծառացնե ձեր մտածումներն ու սրտերը, որպեսզի հստակությամբ տեսնեք այն ուղիղ ճանապարհը, որ Հայ եկեղեցվո պատմական առաքելության ուղին է, նվիրագործված մեր հավատավոր ժողովուրդի դարերու իղձերով, երազներով ու հերոսական իրագործումներով։

Փա՜ռք Լուսավորչի անմար կանթեղին, փա՜ռք Հայ Եկեղեցիին, փա՜ռք հայ հավատացյալ ժողովուրդին։

Դուք, սիրելյալ զավակներ Մեր, Ատլանտյանի հեռավոր այդ հյուրընկալ ափերուն, ամերիկյան բարեենգի ժողովուրդի ծոցին մեջ, ապրեցեք եղբայրական սիրով ու միաբան, ամուր ու անշարժ ձեր նախյաց լույս հավատքով, ձեր հայկական հոգիով, ձեր հայրենակարոտ անուշ ապրումներով։

Շեն ու պայծառ, լույսի և փառքի մեջ պահեցեք միշտ ձեր եկեղեցիները, համախմբվեցեք անոնց շուրջ, բացեք ձեր սրտերը սուրբ սեղաններու առաջ, որպեսզի առաջապես ընդունիք օրհնությունը Աստուծո և շնորհներ կենարար Ս. Հոգիին։ Եվ ձեզի հետ եկեղեցի բերեք ձեր զավակները, ձեր թոռիկները, որպեսզի անոնք ևս անմասն չմնան երկնային շնորհներեն, որպեսզի անոնք ևս ըլլան, ինչպես դուք տարեցներդ, առաքինի քրիստոնյաներ, հարազատ զավակներ հայ ժողովուրդին և բարի ու հավատարիմ քաղաքացիներ ձեր տիրախնամ մեծ երկրին։

Փրկչի Իշման սուրբ տեղեն, Մենք տիվ և գիշեր աղոթող ենք ձեր եկեղեցյաց պայծառության, ձեր սուրբ գործոց հաջողության և ձեր ու համայն հավատացյալ մեր ժողովուրդի արեշատության ու բարօրության համար։

«Եւ Աստուած խաղաղութեան, որ եհան ի մեռելոց զՀովիւն հօտից, զմեծն արեամբ յաւիտենական ուխտին, զՏէր մեր Յիսուս, հաստատեսցէ զձեզ ի գործս բարութեան առնել զկամս Նորա, և արասցէ ի ձեզ զհաճոյսն առաջի Իւր ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս» (Եբր. ԺԳ 20—21)։

«Շնորհք ընդ ամենեսին ձեզ։ Ամէն»։

Թեմական պատգամավորական ժողովը, առաջնորդ սրբազան հոր անունից, որդիական սիրո, երախտագիտության և հավատարմության հետևյալ հեռագիրն է հղում Վեհափառ Հայրապետին.

«Ամերիկայի հայոց առաջնորդական վիճակի 62-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը, որ կգումարվի մայիս 1 և 2-ին, Սաութ Միլուոկիի Ս. Հարություն եկեղեցվո մեջ, կուգա խոնարհաբար իր որդիական սերը, հարգանքն ու հավատարմությունը հայտնել Ձերդ Ս. Օծության, սա ղթելով

ԱԿԱԴԵՄԻԱ

Զերդ Վեհափառության արևշատ տարիներ, ի փառս Աստուծոյ, ի պայծառություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվոյ»։

Այնուհետև, թեմական պատգամավորական ժողովի առաջին նիստում, առաջնորդ սրբազանն ընթերցում է իր տարեկան զեկույցը, թեմում կատարված եկեղեցաշեն ձեռնարկների, կրոնական, կրթական և համայնքային գործունեության մասին.

«Անցնող տարին, մեր թեմին մեջ, եղավ ժրաջան աշխատանքի և բեղմնավոր գործունեության արդյունալից տարի մը։ Մեր բոլոր եկեղեցիներն ու ծխական խորհուրդները եռանդուն աշխատանք կատարեցին հոգևոր և ազգային կյանքը ծաղկյալ և վառ պահելու մեր ժողովուրդին մեջ։ Հոգևոր հովիվներ անխափան կատարեցին եկեղեցական արարողություններն ու ծիսակատարությունները, և Աստուծո խոսքին մխիթարությունը բաշխեցին հավատացյալ ժողովուրդին, ինչպես նաև ուսուցանելով և դաստիարակելով նոր սերունդը մեր հայրերու առաքելական հավատքով ու ազգային ոգիով։ Ծխական խորհուրդներ, եկեղեցասեր տիկնանց միություններ, հայ և կիրակնօրյա դպրոցներու պաշտոնեություն, Հայ Եկեղեցվո երիտասարդաց կազմակերպության վարչություն, ինչպես նաև պատգամավորներ և թեմական խորհուրդն ու առաջնորդարանի օժանդակ կազմակերպությունները ոգի ի բռին աշխատեցան, կատարելով իրենց պարտականությունը Հայ Եկեղեցվո պայծառության և մեր թեմի կրոնական ու կրթական հառաջդիմության ի նպաստ, որուն համար այսու կհայտնենք մեր սրտագին գնահատանքն ու օրհնությունը մեր բոլոր հոգևորական և աշխարհական պաշտոնակիցներուն, մաղթելով ամենուն աստվածային վարձատրություն և հոգեկան երջանկություն...»։

Ապա ժողովում ընթերցվում են թեմական խորհրդի վարչական և տնտեսական տեղեկագրերը։

Ժողովի երկրորդ նիստում, շաբաթ առավոտ, լսվում են զեկույցներ Մայր Տաճարի կենտրոնական հանձնաժողովի, Ս. Ներսես Շնորհալի աստվածաբանական վարժարանի, թեմի դպրոցների տեսչի, Հայ Եկեղեցու երիտասարդաց կազմակերպությունների, առաջնորդարանի հարաբերությանց դիվանի վարիչի, օժանդակ միության և այլ թեմական հարցերի շուրջ։

Երրորդ նիստում, շաբաթ հետմիջօրին, թեմական պատգամավորական ժողովը հիմնականում քննության է առնում թեմական խորհրդի ներկայացրած թեմական կանոնադրության բարեփոխությունը։

Վերջին նիստում թեմական պատգամավորական ժողովը, «նկատի ունենալով, որ հառաջիկա 1965 տարին ապրիլյան եղեռնի հիսնամյակն է, կազմեց հիշատակահանդեսի կեդրոնական հանձնաժողով-մը» երեք հոգևորականներից և տասներեք հանրածանոթ ազգային դեմքերից և մտավորականներից բաղկացած, և որոշեց «թեմին մեջ կազմակերպել հիշատակի հանդեսներ՝ նվիրված ապրիլյան եղեռնի մեր բյուրավոր նահատակներուն, ազգային, եկեղեցական և կրոնական ոգիով», ինչպես նշվում է առաջնորդարանի դիվանի հաղորդագրության մեջ։

Ամերիկայի հայոց առաջնորդական վիճակի 62-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը իր գոհունակությունն է հայտնում հոտնկայս՝ «առաջնորդ սրբազանին և թեմական խորհուրդի տարեկան գործունեության համար»։